48003222- 0380 - 0202

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար վեց թվականի դեկտեմբերի քսանյոթին
ք.Երևան

Մենք՝ քաղ. Վահան Հարությունյանս, հաշվառված՝ ք.Երևան, Գյուլբենկյան 21-28, որ գործում եմ քաղ. Ռուզաննա Մելիքի Գասպարյանի անունից լիազորագրով հաստատված ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ Ալվարդ Մելքոնյանի կողմից 27.12.2006թ., սեղանամատյան 50837, որը հետագայում կոչվելու է վաճառող և քաղ. Վոլոդյա Մուխայելի Մարտիրոսյանս, հաշվառված՝ ք.Վարդենիս, Երիտասարդության փող. 12շ., բն. 5, որը հետագայում կոչվելու է գնորդ

ԿՆՔԵՑԻՆՔ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

1.Վաճառողը վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում Երևանի Ա.Մանուկյան փողոցի 8/1/ ութ կոտորակ մեկ/ հասցե 1-ին հարկում գտնվող անշարժ գույքը, բաղկացած 131,15/ հարյուր երեսունմեկ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական/քմ. կիսակառույց ոչ բնակելի տարածքից, 628,8/ վեց հարյուր քսանութ ամբողջ ութ տասնորդական/ քմ. ընդհ. աստիճանից և 0,08649/ զրո ամբողջ ութ հազար վեց հարյուր քառասունինները հարյուրհազարերորդական/հա. ընդհանուր հողամասից, / բաժն. սեփ-ը. 131,15/8180,3 /, այսուհետ « Անշարժ Գույք» :

2. Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին, համաձայն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից 06.02.2006թ. տրված 2114081 սեփականության իրավունքի վկայականի և **այն գրավ է դրված «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում**, որը հաստատված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից 25.12.2006թ. տրված 0278173 տեղեկանքով :

3. **Վաճառողը պարտավոր է՝**
Պայմանագիրը կնքելուց հետո 2/ երկու/ օրյա ժամկետում գնորդին հանձնել անշարժ գույքը, դրա պատկանելիքները (դրանց առկայության դեպքում) և դրան վերաբերվող փաստաթղթերը :

4. Մինչև սույն պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից անշարժ գույքը առգրավելու դեպքում հատուցել գնորդի վնասները:

5. **Վաճառողը իրավունք ունի, եթե՝**
Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրին համապատասխան վաճառված անշարժ գույքի արժեքը պահանջել վճարելու գինը և տոկոսները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան:

6. **Գնորդը պարտավոր է՝**
Անշարժ գույքի համար գումարը վճարել սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով պայմանագրի կնքման պահին :

7. Սույն պայմանագրից ծագող իրավունքները գրանցել անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում և վճարել դրա իրականացման հետ կապված բոլոր ծախսերը:

8. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելու պահից իր հաշվին կատարել անշարժ գույքի շահագործման, վերանորոգման հետ կապված ծախսերը:

9. Անշարժ գույքի վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմում է 52.400.000/ հիսուներկու ամբողջ չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

10. « Գույքահարկի մասին » ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն վաճառվող անշարժ գույքի համար սույն պայմագրի կնքման պահին չմարված հարկային պարտավորություններն անցնում են գնորդին:

11. Սույն պայմանագրի կնքման հետ կապված պետ. տուրքի վճարումը կատարվում է Գնորդի կողմից :

12. Սույն պայմանագրի բոլոր լրացումները, փոփոխությունները, պայմանագրի լուծումը կատարվում է կողմերի համաձայնությամբ կամ դատական կարգով:

48008222 -0370-0202

13. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման և կադաստրում սեփականության իրավունքի փոխանցումը գրանցելուց հետո:

14. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով , չորս հավասարազոր օրինակից, որից մեկ օրինակը պահվում է նոտարական տարածքում, իսկ երեք օրինակները տրվում են կողմերին:

ՎԱՃԱՌՈՂԻ լիազորված անձ՝

ԳՆՈՐԴ՝

երկու հազար վեց թվականի դեկտեմբերի քսանյոթին սույն պայմանագիրը վավերացված է ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ Ալվարդ Մելքոնյանիս կողմից :

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

Կողմերի ինքնությունը , գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են:

ՀՀ Քաղ-օր-ի 563 հոդվածի համաձայն , սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում N 50903

Գանձված է պետական տուրք
և ծառայության վճար համաձայն
ՀՀ « Պետական տուրքի մասին »
և « Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար------------------------------------ Ա.Մելքոնյան